

**ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ՏԵՂԵԿԱՆՔԻ ՀԱՎԵԼՎԱԾ**

10.03.2020թ.

ք.Երևան

1. Հանրային պաշտպանության շրջանակներում հանրային պաշտպանի գրասենյակի կողմից անձանց տրամադրվող՝ անվճար իրավաբանական օգնության աշխատանքների իրականացման վերաբերյալ.

Հանրային պաշտպանի գրասենյակը ՀՀ փաստաբանների պալատի կազմում գործող կառուցվածքային ստորաբաժանում է, որը ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում անձանց տրամադրում է անվճար իրավաբանական օգնություն՝ իրականացնում է հանրային պաշտպանություն:

Անվճար իրավաբանական օգնությունը ներառում է՝

1) խորհրդատվությունը՝ հայցադիմումների, դիմումների, բողոքների և այլ իրավաբանական բնույթի դատավարական փաստաթղթերի կազմում, ներառյալ՝ իրավաբանական տեղեկատվության տրամադրում:

2) ներկայացուցչությունը կամ պաշտպանությունը՝ քրեական, քաղաքացիական, վարչական և սահմանադրական գործերով:

Իրավաբանական օգնությունը տրամադրվում է գրասենյակում աշխատող փաստաբանների՝ հանրային պաշտպանների միջոցով:

Փաստաբանները որպես հանրային պաշտպան աշխատանքի են ընդունվում մրցույթային ընթացակարգի արդյունքներով և վարձատրվում են ՀՀ փաստաբանների պալատին ՀՀ պետական բյուջեից հատուկ այդ նպատակով տրամադրվող միջոցներով:

Գրասենյակը ղեկավարում է հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարը, որն ըստ օրենքի պետք ունենա առնվազն երկու տեղակալ: Նշված պահանջը հնարավոր է եղել ապահովել միայն 2020 թվականին պետության կողմից տրամադրված լրացուցիչ միջոցների շնորհիվ: Իր գործունեության նախորդ ամբողջ ժամանակահատվածում, ի հակառակ օրենքի պահանջի, գրասենյակն ունեցել է գրասենյակի ղեկավարի միայն մեկ տեղակալ՝ պետության կողմից տրամադրվող միջոցների սղության պատճառով: Գրասենյակի բնականոն աշխատանքը կազմակերպվում է օժանդակ անձնակազմի միջոցով (ընդունարանի պատասխանատու, օգնական, վարորդ, հաշվապահ և այլն):

Թեև հանրային պաշտպանի գրասենյակը ծառայություն է մատուցում պետական միջոցներով (պատվերով), այդուհանդերձ անկախ է և չի ենթարկվում որևէ պետական գերատեսչության: Իրավաբանական օգնություն ցուցաբերելիս հանրային պաշտպանները ենթարկվում են բացառապես փաստաբանի վարքագծին առաջադրվող համընդհանուր պահանջներին և գրասենյակի ներքին կարգապահական կանոններին:

Հանրային պաշտպանների աշխատանքի նկատմամբ հսկողություն են իրականացնում գրասենյակի ղեկավարը և տեղակալները, իսկ հանրային պաշտպանի գրասենյակի գործունեության նկատմամբ վերահսկողություն է իրականացնում ՀՀ փաստաբանների պալատի նախագահը (տեղակալը):

Հանրային պաշտպանի գրասենյակը հիմնվել է ինչպես Հայաստանի, այնպես էլ տարածաշրջանի համար բոլորովին նոր հայեցակարգի ներդրմամբ: ՀՊԳ կազմավորման ողջ ընթացքում ճնշում է գործադրվել այս մոդելից հրաժարվելու համար, սակայն տարիների հետևողական աշխատանքն ու մատուցվող բարձրորակ ծառայություններն իրականության մեջ ապացուցել են ընտրված մոդելի արդյունավետությունը և արդիականությունը:

Հանրային պաշտպանի գրասենյակի ստեղծման և կայացման հարցում անուրանալի աջակցություն է ցուցաբերել Ամերիկյան իրավաբանների ընկերակցության իրավունքի գերակայություն նախաձեռնությունը: Վերջինս հանդիսացել է գրասենյակի կայուն գործընկերը՝ շարունակաբար աջակցելով գրասենյակին՝ հանրային պաշտպանության ծառայությունների իր կարողությունները գնահատելու և արդյունավետ զարգացնելու հարցում:

Հիմնադրման և գործունեության նախնական հատվածում գրասենյակում աշխատում էին ընդհանուր Երևանում և մարզերում 32 հանրային պաշտպան, որոնք աշխատում էին տներում և ժամանակավոր գրասենյակներում:

2007 թվականի հունիսին բացվել է Հանրային պաշտպանի գրասենյակի Երևանյան նստավայրը՝ հիմք հանդիսանալով գրասենյակի հետագա կայուն զարգացման համար: Այն անհատույց կարգով Փաստաբաններին է տրամադրել պետությունը:

Առաջին տարիներին, օրենքի կարգավորումներին համապատասխան, անվճար իրավաբանական օգնություն էր ցուցաբերվում բացառապես ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված դեպքերում՝ քրեական հետապնդման ենթարկվող անձանց (կասկածյալներին և մեղադրյալներին), և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված դեպքերում՝ ալիմենտի գանձման վերաբերյալ գործերով և խեղման կամ առողջությանն այլ վնաս պատճառելու, ինչպես նաև կերակրողի մահվան հետևանքով պատճառված վնասի փոխհատուցման վերաբերյալ գործերով:

Այնուհետև՝ 2011 թվականին ընդունված օրենսդրական փոփոխությունների արդյունքում, քաղաքացիական, վարչական և այլ գործերով անվճար իրավաբանական օգնություն ստանալու իրավունք ունեցող անձանց թիվն օրենսդրորեն ընդլայնվել է՝ ընդգրկելով 11 խումբ անձանց: Ընդ որում, որոշ խմբերի մասով կարգավորումներն ուժի մեջ են մտել 2013 թվականի հունվարի 1-ից, իսկ մյուսներ մասով՝ 2014 թվականի հունվարի 1-ից:

Հետագա տարիներին ևս օրենսդրական լրացումների արդյունքում ավելացել են անվճար իրավաբանական օգնություն ստանալու իրավունք ունեցող անձանց խմբերը:

Ներկայում գրասենյակ դիմելու դեպքում անվճար իրավաբանական օգնություն է ցուցաբերվում 16 խումբ անձանց:

Այսպիսով, ներկայում անվճար իրավաբանական օգնությունը տրամադրվում է հետևյալ անձանց և նշված կարգով՝

1. Քրեական հետապնդման ենթարկվող անձանց (կասկածյալ կամ մեղադրյալ)՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ վարույթն իրականացնող մարմնի (քննիչ, դատարան) որոշման կամ դիմումի հիման վրա,
2. Անգործունակ ճանաչվող անձանց՝ վարույթն իրականացնող դատարանի որոշման հիման վրա,
3. «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքով սահմանված 16 խումբ անձանց՝ իրենց դիմումի հիման վրա:

Հանրային պաշտպանի գրասենյակ դիմելու դեպքում անվճար իրավաբանական օգնություն է ցուցաբերվում հետևյալ 16 խումբ անձանց.

1) Հայաստանի Հանրապետության սահմանների պաշտպանության ժամանակ զոհված (մահացած) զինծառայողի ընտանիքի անդամներին.

2) 1-ին և 2-րդ խմբի հաշմանդամներին.

3) դատապարտյալներին.

4) ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված՝ 0-ից բարձր անապահովության միավոր ունեցող ընտանիքի անդամներին.

5) Հայրենական մեծ պատերազմի և Հայաստանի Հանրապետության սահմանների պաշտպանության ժամանակ մարտական գործողությունների մասնակիցներին.

6) գործազուրկներին.

7) միայնակ բնակվող կենսաթոշակառուներին.

8) առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին, ինչպես նաև առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձանց.

9) փախստականներին.

10) Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր պաշտպանություն ստացածներին.

11) անվճարունակ այն ֆիզիկական անձանց, որոնք իրենց անվճարունակությունը հաստատող հավաստի տվյալներ են ներկայացնում:

12) հոգեբուժական կազմակերպությունում բուժվող հոգեկան խանգարումներ ունեցող անձանց.

13) օրենքով սահմանված կարգով մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված զոհերի նույնացման հանձնաժողովի կողմից զոհ կամ հատուկ կատեգորիայի զոհ ճանաչված անձանց.

14) Հայաստանի Հանրապետությունում ապաստան հայցողներին.

15) խոշտանգումից տուժած անձանց՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1087.3-րդ հոդվածով սահմանված կարգով փոխհատուցում ստանալու նպատակով.

16) «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն ընտանիքում բռնության ենթարկված անձանց:

Անվճար իրավաբանական օգնություն ցույց չի կարող տրվել վերը նշված խմբերի անձանց՝

1) ձեռնարկատիրական բնույթի գործերով (ներառյալ՝ կորպորատիվ վեճերով).

2) նվազագույն աշխատավարձի հազարապատիկը (մեկ միլիոն ՀՀ դրամը) գերազանցող գույքային (գումարի) պահանջով գործերով, բացառությամբ այն գործերի, որտեղ անձը հանդես է գալիս որպես պատասխանող կամ պատասխանողի կողմում հանդես եկող երրորդ անձ.

3) եթե առկա են դիմող անձի անվճարունակությունը ժխտող փաստական հավաստի տվյալներ:

Ըստ օրենքի՝ անվճարունակ է համարվում այն ֆիզիկական անձը, որը չունի բավարար եկամուտ, համատեղ բնակվող աշխատող ընտանիքի անդամ, ինչպես նաև բացի անձնական բնակարանից, որպես սեփականություն չունի այլ անշարժ գույք կամ նվազագույն աշխատավարձի հազարապատիկը գերազանցող արժեքի փոխադրամիջոց:

Անվճար իրավաբանական օգնություն կարող է չցուցաբերվել նաև ակնհայտ անօրինական և անհիմն պահանջի գործերով, երբ անձը հանդես է գալիս հայցվոր կամ դիմող կողմում:

Օրենսդրական փոփոխություններին զուգահեռ, Հանրային պաշտպանի գրասենյակի հավելյալ ծանրաբեռնվածության հաշվառմամբ, պետության կողմից հանրային պաշտպանների հաստիքների համար հատկացվող միջոցներն ավելացվել է: Արդյունքում՝ 2016 թվականին հանրային պաշտպանների հաստիքներ քանակը հասել է 54-ի: Չնայած ծանրաբեռնվածության կայուն աճին, այդ թվում՝ պայմանավորված անվճար իրավաբանական օգնություն ստանալու իրավունք ունեցող անձանց շրջանակի օրենսդրական ընդլայնմամբ, 2016 թվականից մինչև 2020թ. պետության կողմից գրասենյակին հատկացված հաստիքները չեն վերանայվել և լրացուցիչ հաստիքներ չեն տրամադրվել: 2020թ. համար պետության կողմից տրամադրվել են լրացուցիչ միջոցներ, ինչի շնորհիվ հնարավոր է եղել ապահովել գրասենյակի ղեկավարի երկրորդ տեղակալի օրենքով սահմանված հաստիքը և ևս 5 հանրային պաշտպանի հաստիք:

ՀՊԳ կարիքների գնահատման նպատակով մշտապես իրականացվում են թե՛ ընթացիկ, թե՛ տարեկան արդյունքներով ուսումնասիրություններ: Կատարված ուսումնասիրությունների արդյունքում ի հայտ են բերվում այն հիմնական կարիքները,

որոնք առաջնային լուծում են պահանջում: Դրանք հիմնականում պայմանավորված են նյութական ռեսուրսների սակավությամբ և հանրային պաշտպանների հաստիքների քանակի սղությամբ: Այս առումով, թեև 2020 թվականին համար տրամադրված լրացուցիչ հաստիքները որոշ չափով կարող են մեղմել վիճակը հանրային պաշտպանների գերծանրաբեռնվածության հարցում, սակայն ակնհայտորեն չեն կարող առկա իրավիճակի լուծում լինել:

Յուրաքանչյուր տարի գրանցվում է գրասենյակի ծանրաբեռնվածության կայուն աճ, ընդ որում՝ բավականին զգալի:

Ներկայումս գրասենյակն աշխատում է գերծանրաբեռնված: Գործող հաստիքներով, գործերի վերջին տարիներին գրանցվող աճի պարագայում մոտ ապագայում անհնարին կդառնա քրեական գործերով վարույթ իրականացնող մարմինների որոշումների ժամանակին կատարման ապահովումը, և գրասենյակ դիմող բոլոր քաղաքացիներին քաղաքացիական, վարչական և սահմանադրական գործերով անվճար որակյալ իրավաբանական օգնության ժամանակին տրամադրումը: Հանրային պաշտպանի գրասենյակն ի վիճակի չի լինի ամբողջությամբ կատարել իր առաքելությունը՝ որակյալ իրավաբանական օգնության տրամադրումը:

Նշված իրավիճակը Պալատի գնահատմամբ կարող է շտկվել միայն գրասենյակին հանրային պաշտպանների լրացուցիչ հաստիքներ տրամադրելու միջոցով:

Հարկ է նշել, որ Հայաստանի Հանրապետության Նախագահի 21.04.2009թ. թիվ ՆԿ-59-Ն կարգադրությամբ հաստատված «Դատաիրավական բարեփոխումների 2009-2011 թվականների ռազմավարական գործողությունների ծրագրից բխող միջոցառումների» ցանկով արդարադատության մատչելիությունն, արդյունավետությունն և թափանցիկությունն ապահովվող միջոցառումների շարքում 3.10 կետով որպես նպատակ-խնդիր նախատեսվել է անվճար իրավաբանական օգնության շրջանակների ընդլայնում եվրոպական չափանիշներին համապատասխան:

Նշված նպատակի իրագործման համար որպես ենթակառուցվածքային գործողություն սահմանվել է **հանրային պաշտպանների հաստիքային առկա թվաքանակը հասցնել առնվազն 75-ի**: Այդ գործողության կատարման վերջնաժամկետ է նախատեսվել **2010 թվականի մարտի 3-րդ տասնօրյակը**, սակայն, մինչ 2020 թվականը Պալատին հատկացված գումարը բավականացրել է միայն 54 հանրային պաշտպանների և գրասենյակի ղեկավարի մեկ տեղակալի հաստիքի համար: Չնայած 2020 թվականի համար Պալատին հատկացված լրացուցիչ ֆինանսավորման՝ այդուհանդերձ Հանրապետության Նախագահի **2010 թվականի կարգադրությունը 15 հանրային պաշտպանների հաստիքների մասով մինչ օրս մնում է չկատարված**:

ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ

Երևան քաղաքում և Հայաստանի Հանրապետության մարզերում անվճար իրավաբանական օգնության տրամադրման արդյունավետությունն ապահովելու նպատակով հանրային պաշտպանների հաստիքները տեղաբաշխել են վարչատարածքային սկզբունքով՝ ըստ մարզերի, ինչպես նաև ըստ մասնագիտացման (քրեաիրավական, քաղաքացիաիրավական), դատարանների նստավայրերի և գործերի քանակի հաշվառմամբ, հաշվի առնելով նաև շահերի բախման առաջացման վտանգը: 2019թ. հանրային պաշտպանի 43 հաստիք նախատեսված է եղել քրեաիրավական ոլորտում անվճար իրավաբանական օգնություն տրամադրելու համար, իսկ 11 հաստիք՝ քաղաքացիաիրավական (այդ թվում՝ վարչաիրավական) ոլորտում անվճար իրավաբանական օգնություն տրամադրելու համար:

ՀՊԳ վարած գործերի վիճակագրական տվյալները՝ 2011–2019 թվականների համար

Ա. Քրեական գործերով					
Ժամանակահատված	Գործերի քանակ	ՀՊ հաստիքների ընդհանուր քանակ	Գործերի աճ թվով նախորդ տարվա համեմատ	Գործերի աճ տոկոսով նախորդ տարվա համեմատ	Քրեաիրավական ուղղվածության մեկ հաստիքին բաժին ընկնող գործերի քանակ
2011	2962	32	-	-	
2012 ¹	3102	49 ²	140	5%	
2013	3219	49	117	4%	
2014	3666	49	447	14%	85
2015	4600	49	934	25%	107
2016 ³	5264	54	664	14%	120
2017	5891	54	627	12%	134
2018	6688	54	797	14%	152
2019թ.	7183	54	495	7.5%	167

Նշված տվյալների համաձայն՝ քրեաիրավական ուղղվածության հանրային պաշտպանների 43 հաստիքով 2019 թվականի ընթացքում վարվել է 7183 քրեական գործ, այսինքն՝ մեկ հաստիքին բաժին է ընկել միջինը 167 քրեական գործ:

¹ Մինչև 2012թ. սեպտեմբեր ամիսը գործել է հանրային պաշտպանի 32 հաստիք:

² 50 հաստիքից 1 հաստիքը ՀՊԳ ղեկավարի տեղակալի հաստիքն է: Հաստիքները նշված են ընդհանուր կարգով՝ քրեական և քաղաքացիական մասնագիտացումներով:

³ 2016թ. հունվարի 1-ից հանրային պաշտպանի 5 հաստիք ավելացվել է:

Բ. Քաղաքացիական, վարչական, սահմանադրական գործեր				
<i>Ժամանակահատված</i>	<i>Գործերի քանակ</i>	<i>ՀՊԳ հաստիքների ընդհանուր քանակ</i>	<i>Գործերի ած թվով նախորդ տարվա համեմատ</i>	<i>Գործերի ած տոկոսով նախորդ տարվա համեմատ</i>
2011 ⁴	12	32	-	-
2012	17	49	5	42%
2013	363	49	346	2035%
2014	1334 ⁵	49	971	267%
2015	2588	49	1254	94%
2016	4750	54	2162	84%
2017	5865	54	1115	23%
2018	7021	54	1103	20%
2019թ.	8608	54	1587	23%

Քաղաքացիական (վարչական) գործերով դատական ներկայացուցչություն		
<i>Ժամանակահատված</i>	<i>Գործերի քանակ</i>	<i>Քաղաքացիաիրավական ուղղվածության մեկ հաստիքին տարվա ընթացքում բաժին ընկնող գործերի քանակ</i>
2016	647	65
2017	862	86
2018	1182	118
2019թ.	1460	133

Նշված տվյալների համաձայն՝ քաղաքացիաիրավական ուղղվածության հանրային պաշտպանի 11 հաստիքով 2019 թվականի ընթացքում իրականացվել է ներկայացուցչություն 1182 քաղաքացիական (վարչական) գործով, այսինքն՝ մեկ հաստիքին բաժին է ընկել միջինը 133 ներկայացուցչության գործ: Եվ սա այն դեպքում, երբ նախորդ տարիների վիճակագրական տվյալների և կանխատեսվող զարգացումների հաշվառմամբ 2019 թվականին քաղաքացիաիրավական մասնագիտացման հանրային պաշտպանների քանակը ավելացվել է քրեաիրավական մասնագիտացման հաստիքների հաշվին:

Ներկայացված վիճակագրական տվյալները վկայում են, որ 2013 թվականին վարված 3219 քրեական գործի փոխարեն 2019 թվականին գրասենյակը վարել է 7183 գործ, իսկ քաղաքացիական, վարչական և սահմանադրական գործերով 2013

⁴ 2011թ. միայն մի քանի քաղաքացիական գործերով էր նախատեսվում հանրային պաշտպան տրամադրել:

⁵ Ներառում է նաև գրավոր և բանավոր խորհրդատվությունները:

թվականի 363 գործի փոխարեն 2019 թվականին վարվել է 8608 գործ: Այսինքն՝ գրասենյակի վարած գործերի քանակն առաջին դեպքում ավելացել է կրկնակիից ավելի (223%-ով), իսկ երկրորդ դեպքում՝ մոտ 24 անգամ (2371%-ով), մինչդեռ նշված ժամանակահատվածում պետության կողմից ՀՊԳ-ին տրամադրված հաստիքներն ավելացել են ընդամենը 5-ով:

Այլ կերպ ասած, 2013 թվականին 49 հանրային պաշտպանը վարել է ընդհանուր առմամբ 3.582 գործ, իսկ 2019թ.՝ 54 հանրային պաշտպանն ընդհանուր 15.791 գործ: Ըստ այդմ՝ գործերի քանակը ավելացել է 441%-ով, իսկ հանրային պաշտպանների հաստիքների քանակը՝ 10%-ով: Այսպիսի պայմաններում, 2020 թվականի համար տրամադրված 5 հաստիքները փաստացի չեն կարող շրջադարձային փոփոխություն մտցնել առկա իրավիճակի առումով, ընդամենը որոշ չափով կարող են հետաձգել սահմանային կետի վրա հասնելը:

Վիճակագրական տվյալներին, թերևս, անհրաժեշտ է հավելել, որ 2019 թվականի ընթացքում քրեական վարույթների շրջանակներում հանրային պաշտպանները, որպես հերթապահություն շուրջ 368 անգամ ոչ աշխատանքային օրերին և ժամերին, այդ թվում՝ գիշերային ժամանակ, մասնակցել են քննչական և այլ դատավարական գործողությունների, որից 308 դեպքում՝ Երևանում, իսկ 60 դեպքում՝ մարզերում: Հարկ է նկատել, որ դրա համար հանրային պաշտպանները լրացուցիչ չեն վարձատրվում:

Հանրային պաշտպանի գրասենյակի գործերի աճը պայմանավորված է մի շարք գործոններով՝

- օրենսդրական լրացումների արդյունքում գրասենյակի շահառուների ցանկի համալրմամբ,
- գրասենյակի գործունեության վերաբերյալ հանրային իրազեկության բարձրացմամբ,
- հանրային պաշտպանների մասնագիտական պատրաստվածության անհամեմատ բարելավման և հանրային պաշտպանի գրասենյակի նկատմամբ վստահության աճի հանգամանքներով,
- հանրության իրավագիտակցության բարձրացմամբ:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի փոփոխություններով անվճար իրավաբանական օգնություն ստացող անձանց շրջանակը պարբերաբար ավելացվելուն զուգահեռ 2016-2018թթ. կատարված օրենսդրական փոփոխությունների արդյունքում ՀՊԳ կողմից տրամադրվող իրավաբանական օգնություն ստացող շահառուների խմբերն ավելացել են չորսով, սակայն փոփոխություններից հետո լրացուցիչ հաստիքների տրամադրում չի եղել:

Օրենսդրական փոփոխությունների արդյունքում 2018 թվականի ապրիլից սահմանվել է հանրային պաշտպանի պարտադիր մասնակցությունն անձանց անգործունակ ճանաչելու վերաբերյալ դատական վարույթներին, ինչն էականորեն ավելացրել է քաղաքացիաիրավական մասնագիտացմամբ հանրային պաշտպանների

ծանրաբեռնվածությունը: 2018 թվականի ապրիլից դատարանների կողմից հանրային պաշտպաններ ներգրավելու մոտ 130 որոշում է կայացվել: Ընդ որում, արդեն իսկ առկա փորձը ցույց է տալիս, որ այդ գործերը բավականին ժամանակատար են, քանի որ պարտադիր են տնայցերը և համապատասխան հաստատություններ այցերը, որպես կանոն նշանակվում են 4-5 դատական նիստեր:

2018 թվականի ապրիլից նաև ավելացել է դատավարության մասնակիցների պարտականությունները, մասնավորապես՝ փաստաթղթերի պատճենները կողմերին ուղարկելու պարտականությունը: Նաև սահմանվել են կարգավորումներ, որոնք պահանջում են սեղմ ժամկետներում գործողությունների կատարում:

Առանձին ուշադրության են արժանի ապաստան հայցողների վերաբերյալ գործերը⁶, որոնք ևս բավականին ժամանակատար են, ինչը պայմանավորված է նշված անձանց հետ հարցազրույցների տևականությամբ (միջինը տևում է 6 ժամ) և, որպես կանոն, թարգմանիչների մասնակցությամբ:

2019 թվականին անհամեմատ ավելացել է ապաստան հայցողներին տրամադրվող անվճար իրավաբանական օգնության գործերի քանակը: Այսպես, 2019 թվականին անվճար իրավաբանական օգնություն ստանալու համար դիմել է 70 ապաստան հայցող անձ, մինչդեռ 2018 թվականին դիմել էր 26, իսկ 2017 թվականին՝ 4 ապաստան հայցող անձ:

Իրազեկվածության և հանրային պաշտպանների աշխատանքի արդյունավետության բարձրացմամբ պայմանավորված տարեցտարի աճել է նաև գրասենյակ դիմող դատապարտյալների թիվը:

2015 թվականին գրասենյակ է դիմել 76 դատապարտյալ, 2016թ.՝ 272 դատապարտյալ, 2017թ. այդ թիվը հասել է 585-ի:

2018 թվականին գրեթե կրկնակի ավելացել է դատապարտյալներին տրամադրվող անվճար իրավաբանական օգնության գործերի քանակը. 2018 թվականին անվճար իրավաբանական օգնություն ստանալու համար դիմել է 1045 դատապարտյալ: Նույն միտումը շարունակվել է նաև 2019 թվականին, որի ընթացքում (իրավաբանական օգնություն է տրամադրվել 731 դատապարտյալի):

Հանրային պաշտպանները դատապարտյալներին տեսակցում են քրեակատարողական հիմնարկներում, որը բավականին ժամանակատար է:

Բավականին ժամանակ է ծախսվում ինչպես նշված վայրեր հասնելու համար, այնպես էլ հիմնարկների վարչակազմերի կողմից տեսակցությունը կազմակերպելու համար:

Հարկ է նաև նշել, որ քրեակատարողական հիմնարկները հիմնականում տեղակայված են մարզերում, բնակավայրերից (գրասենյակի նստավայրերից) բավականին հեռավորության վրա, որը հավելում է նշված խմբի անձանց իրավաբանական օգնություն ցուցաբերելու համար տրամադրվող

⁶ Ապաստան հայցողներին անվճար իրավաբանական օգնություն է ցուցաբերվում 2016թ. օրենսդրական փոփոխությունների արդյունքում:

ժամանակահատվածը⁷ և ծախսված նյութական ռեսուրսները:

Եթե որպես ելակետ ընդունենք դատապարտյալներին իրավաբանական օգնություն տրամադրելու համար ծախսվող 3-4 ժամը, ապա ստացվում է, որ ՀՊԳ-ն տարեկան առնվազն երեքից չորս հազար աշխատանքային ժամ ծախսում է նշված խումբ անձանց իրավաբանական օգնություն տրամադրելու համար: Նման պայմաններում բոլորին իրավաբանական օգնություն տրամադրելու համար մեկ հանրային պաշտպանին անհրաժեշտ կլինի 400-ից 500 աշխատանքային օր:

Քաղաքացիների մի ստվար զանգված, այդ թվում նաև՝ դատապարտյալների զգալի մասը, դիմում է նոր երևան եկած կամ նոր հանգամանքով գործերի վերանայման խնդրանքով՝ պատճառաբանելով քաղաքական իրավիճակի փոփոխությունը:

Նրանք հաճախ գտնում են, որ տեղի է ունեցել դատական սխալ: Նշված խնդրի իրականացման համար անհրաժեշտ են հավելյալ ռեսուրսներ՝ անցյալում քննված գործի նյութերի ձեռք բերման, ծանոթացման, ուսումնասիրության և հիմքեր լինելու դեպքում դատարան դիմելու և դատարանում նշված անձանց շահերը ներկայացնելու համար:

Առանձնահատուկ ուշադրության է արժանի այն, որ հանրային պաշտպանների խիստ ծանրաբեռնվածության, ինչպես նաև վերը նշված պատճառներով վերջիններս չեն կարողանում բավարար հաճախականությամբ այցելել անազատության մեջ գտնվող իրենց պաշտպանյալներին, ինչը կարող է հանգեցնել պաշտպանության արդյունավետության նվազման:

Լրացուցիչ հաստիքների տրամադրման դեպքում հնարավոր կլինի մեղմել հանրային պաշտպանների ծանրաբեռնվածությունը, ինչն իր հերթին հնարավորություն կտա նրանց առավել հաճախ այցելել իրենց պաշտպանյալների:

Հանրային պաշտպանի գրասենյակի շահառուներից են նաև 1-ին և 2-րդ կարգի հաշմանդամները, որոնց զգալի մասն ունի տեղաշարժման խնդիր: Տեղաշարժման խնդիր ունեցող քաղաքացիներին իրավաբանական օգնություն տրամադրվում է տնայցեր կատարելու միջոցով, որը ևս ժամանակատար է⁸:

Հանրային պաշտպանի գրասենյակի շահառուներից են նաև հոգեբուժական կազմակերպություններում բուժվող հոգեկան խանգարումներ ունեցող անձինք, որոնց նույնպես օգնություն է տրամադրվում հոգեբուժարան այցելելու միջոցով:

Վերևում ներկայացված ցուցանիշներն ակնհայտորեն վկայում են յուրաքանչյուր տարի գրասենյակի ծանրաբեռնվածության կայուն աճի մասին, ընդ որում՝ բավականին զգալի: Այսպիսի իրավիճակի շարունակականության դեպքում անհնարին կդառնա արդյունավետ պաշտպանության իրականացումը և իրավաբանական օգնության

⁷ Միջինը 3-4 ժամ, մինչդեռ խորհրդատվությունը ՀՊԳ-ում տրամադրելու դեպքում հանրային պաշտպանը ծախսում է միջինը 45 րոպե:

⁸ Միջինը՝ 2,5 ժամ, մինչդեռ օգնությունը ՀՊԳ-ում տրամադրելու դեպքում հանրային պաշտպանը ծախսում է միջինը 45 րոպե:

ցուցաբերումը: Միայն լրացուցիչ հաստիքների տրամադրման դեպքում հնարավոր կլինի մեղմել հանրային պաշտպանների ծանրաբեռնվածությունը:

Լրացուցիչ միջոցներ ստանալու պահանջը բավարարելու համար նախադրյալներ ստեղծելու նպատակով՝ Պալատի նախագահի առաջարկության հիման վրա հանրային պաշտպաններին հանձնարարվել է քաղաքացիական և վարչական գործերով դատական ներկայացուցչություն ապահովելու շրջանակներում դատարանին պարտադիր ներկայացնել միջնորդություն դատական ծախսերի հարցի լուծման վերաբերյալ՝ կապված փաստաբանական ծառայությունների վճարի հետ՝ հղում կատարելով ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի «Դատարանների կողմից դատական ծախսերի հատուցման հետ կապված փաստաբանական գործունեության վճարների միջին գնացուցակ հաստատելու մասին» 26.12.2013թ. թիվ 33/3-լ որոշմանը: Այս եղանակով 2018-2019թթ. հանրային պաշտպանների կողմից հաջողություն արձանագրած դատական գործերով արդեն իսկ մեծ ծավալի ֆինանսական միջոցներ են մուտքագրվել (պահանջի իրավունք առաջացել) պետական բյուջե՝ որպես դատական ծախսերի հատուցում:

Չնայած հանրային պաշտպանի գրասենյակի ծանրաբեռնվածությունը մեղմելու համար առանցքային նշանակություն ունի լրացուցիչ հաստիքների տրամադրումը՝ այդուհանդերձ Պալատի կողմից ձեռնարկվում են նաև հավելյալ միջոցներ այլընտրանքային լուծումներով վիճակը շտկելու ուղղությամբ: Այդ նպատակով Պալատը մշտապես հանդես է գալիս տարատեսակ նախաձեռնություններով:

Ընդ որում, այն նախաձեռնությունները, որոնք պետությունից ֆինանսական միջոցների տրամադրում չեն պահանջում, սակայն պահանջում են պետության աջակցությունը կամ համաձայնությունը, ներկայացվում են համակողմանի վերլուծության արդյունքներով, վերջնական պատրաստի տեսքով: Հարկ է նկատել, որ երբեմն այդ դեպքերում անգամ խոչընդոտներ են առաջանում:

Համագործակցության հաջող օրինակ է «Պրո Բոնո» ծրագրի ներդրումը: Մասնավորապես, Պալատի նախաձեռնությամբ գրասենյակի ծանրաբեռնվածությունը մեղմելու նպատակով ՀՀ արդարադատության նախարարության հետ համաձայնեցմամբ մշակվել և ներդրվել է «Պրո Բոնո» ծրագիրը, որի շրջանակներում անհատ փաստաբաններն առանձին գործերով իրավաբանական օգնություն են ցուցաբերում գրասենյակի շահառուներին, ինչի դիմաց Պալատը նրանց տրամադրում է աշխատասենյակ և աշխատանքային անհրաժեշտ պարագաներ: Այս գործիքը Երևան քաղաքում որոշակի դրական ազդեցություն է ունենում գրասենյակի ծանրաբեռնվածությունը նվազեցնելու հարցում, միաժամանակ հնարավորություն է տալիս երիտասարդ փաստաբաններին հաղթահարել գործունեությունը սկսելու սկզբում առաջացող տեխնիկական և նյութական դժվարությունները:

Դրան հակառակ, սակայն, երբ շրջանառության մեջ էր դրվել «Փաստաբանության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու նախագիծը, որով, ի թիվս այլնի առաջարկվում էր լրացուցիչ գործիքների ներդրմամբ և այլընտրանքային միջոցներով նվազեցնել պետության ծանրաբեռնվածությունը,

Ազգային ժողովում երկրորդ ընթերցման ժամանակ անհասկանալի հիմնավորմամբ տեխնիկական պատճառներով նախագծի ընդունումը մերժվեց:

Ընդ որում, նախագիծը արժանացել էր ՀՀ արդարադատության նախարարության հավանությանը: Ստացվում է մի իրավիճակ, երբ պետությունը տարիներ շարունակ անտարբեր է մնում անվճար իրավաբանական օգնության տրամադրման ոլորտում առկա խնդրին կամ օբյեկտիվ պատճառներով՝ ֆինանսական միջոցների սղությամբ պայմանավորված չի կարողանում լուծել խնդիրը, սակայն մյուս կողմից մերժում է իրեն առաջարկված այլընտրանքային լուծումները՝ այդպիսով այս ոլորտում ձախողման պատասխանատվությունը վերցնելով իր վրա:

Այլընտրանքային լուծումներով գրասենյակի գերծանրաբեռնվածության խնդիրը շտկելու նպատակով Պալատը մշտապես համագործակցություն է փնտրում գրասենյակի կարողությունները զարգացնելու հարցում շահագրգիռ և գրասենյակի հետ համագործակցության պատրաստ միջազգային և հասարակական կազմակերպությունների հետ՝ դրամաշնորհային ծրագրերի միջոցով օժանդակ գործիքներով առկա իրավիճակը մեղմելու համար: Հարկ է նկատել, որ այդ ծրագրերը ևս կարող են առավել արդյունավետ լինել և հաջողված արդյունքներ գրանցել, եթե գրասենյակը կաշկանդված չլինի օրենսդրական մակարդակի մի շարք սահմանափակումներով:

Գոյության ամբողջ ընթացքում թե՛ սեփական ուժերով, թե՛ տարատեսակ համագործակցությունների շրջանակներում գրասենյակում իրականացվել են շարունակական աշխատանքներ մատուցվող ծառայությունների որակը հետզհետե բարձրացնելու, հանրային պաշտպանների հմտությունները ու գիտելիքները բազմաոլորտ զարգացնելու, նոր մեթոդաբանության և գործիքակազմի ներդնելու ուղղությամբ: Շարունակաբար բարելավվել է ներքին կազմակերպումը, վարչարարությունը և վերահսկողությունը, ինչպես նաև գրասենյակի գործունեության թափանցիկությունը:

Ամերիկյան իրավաբանների ընկերակցության օժանդակությամբ հանրային պաշտպանի գրասենյակում ներդրվել է էլեկտրոնային տեղեկատվական և կառավարման համակարգը, ինչի շնորհիվ գրեթե ամբողջությամբ էլեկտրոնայնացվել է ներքին վարչարարությունը: Դրա հիման վրա ստեղծվել է անվճար իրավաբանական օգնություն ստացող անձանց, վարվող գործերի ընթացքի և արդյունքների վերաբերյալ տվյալների էլեկտրոնային համընդգրկուն շտեմարան՝ տարատեսակ, այդ թվում՝ կատարողական հաշվետվությունների արտահանման հնարավորությամբ:

Փաստաբանների պալատի կողմից իրականացվող վերապատրաստման պարտադիր դասընթացներին զուգահեռ՝ հանրային պաշտպանների մասնագիտական հմտությունները զարգացնելու նպատակով՝ տարբեր հասարակական և միջազգային կազմակերպությունների հետ համագործակցությամբ հանրային պաշտպանների համար կազմակերպվում են առանձին խումբ անձանց իրավունքների պաշտպանության վերաբերյալ դասընթացներ, անձնական կարողությունների զարգացման ծրագրեր և մասնագիտական քննարկումներ:

Այդպիսի օրինակներ են ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակի, ԱՄՆ դեսպանատան, Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի, հասարակական կազմակերպությունների և հիմնադրամների կողմից կազմակերպված դասընթացներին և այլ միջոցառումներին մասնակցությունը:

Հանրային պաշտպաններին նյութապես խրախուսելու, պարգևատրելու կամ այլ սոցիալական երաշխիքներ տրամադրելու համար պետության կողմից միջոցներ չի տրամադրվում: Այդուհանդերձ հընթացս, ինչպես նաև տարվա արդյունքների ամփոփմամբ տարատեսակ եղանակներով իրականացվում են ոչ նյութական խրախուսանքի միջոցներին, այդ թվում՝ տարվա արդյունքների ամփոփմամբ որոշ հանրային պաշտպանների տրվում են պատվոգրեր և շնորհակալագրեր:

Մատուցվող ծառայությունների որակը հետզհետե բարձրացնելու նպատակով հանրային պաշտպանի գրասենյակում ներդրված են հսկողության և վերահսկողության ճկուն մեխանիզմներ: Մասնավորապես, հանրային պաշտպանների կատարած աշխատանքի նկատմամբ անմիջական հսկողություն են իրականացնում գրասենյակի ղեկավարը և նրա տեղակալները: Ընդհանուր վերահսկողությունը գրասենյակի գործունեության նկատմամբ իրականացնում է Պալատի նախագահը: Նրան այդ հարցում օժանդակում է Պալատի նախագահի տեղակալը և հանրային պաշտպանի գրասենյակի մշտադիտարկման խումբը:

Անվճար իրավաբանական օգնության տրամադրման սահմանված ընթացակարգերի պահանջների կատարման նկատմամբ վերահսկողությունն ապահովելու անհրաժեշտությամբ պայմանավորված մշտադիտարկման խումբն իրականացնում է հանրային պաշտպանների կողմից վարվող գործերի վերաբերյալ գրասենյակի էլեկտրոնային տեղեկատվական համակարգում առկա տվյալների ստուգում, անճշտությունները վեր հանում, դատական նիստերի դիտարկում, հանրային պաշտպանների կողմից առանց հարգելի պատճառների չներկայանալու դեպքերի հայտնաբերում, փաստաբանական վարույթներին ներկայացվող պարտադիր պահանջների ստուգում, վստահորդների հետ տարվող աշխատանքների որակի գնահատում:

Գրասենյակի կողմից ցուցաբերվող իրավաբանական օգնության որակի վերահսկողության նպատակներով յուրաքանչյուր տարվա վերջում իրականացվում է հանրային պաշտպանների կատարած աշխատանքի արդյունավետության գնահատում՝ որակական և քանակական չափանիշներով: Հանրային պաշտպանների միջև առողջ մրցակցության մթնոլորտ ձևավորելու, մատուցվող ծառայությունների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով՝ գնահատման արդյունքներով հաշվետու տարվա ընթացքում նվազ արդյունավետություն ցուցաբերած հանրային պաշտպանների հետ աշխատանքային պայմանագրերը չի երկարաձգվում և նրանց փոխարինելու և թափուր հաստիքները նոր, այդ թվում՝ երիտասարդ բանիմաց փաստաբաններով համալրելու նպատակով, յուրաքանչյուր տարի կազմակերպվում է բաց, թափանցիկ մրցույթ: Մրցույթին առանց սահմանափակման կարող է մասնակցել յուրաքանչյուր՝ արտոնագրի գործողությունը չկասեցված փաստաբան:

Պալատը, և մասնավորապես նաև գրասենյակը, մշտապես իրականացնում են հանրային իրազեկման միջոցառումներ, որոնք միտված են բարձրացնելու

քաղաքացիների իրազեկվածությունը պաշտպան ունենալու իրավունքի և գրասենյակի ծառայությունների վերաբերյալ: Արդյունքը՝ յուրաքանչյուր տարի գրասենյակ դիմող անձանց քանակի կայուն աճն է:

Գրասենյակի գործունեության և անվճար իրավաբանական օգնության վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելու նպատակով, օրինակ, Եվրոպական խորհրդի Երևանի գրասենյակի աջակցությամբ կազմվել են տեղեկատվական թերթիկներ:

Գրասենյակի գործունեությունը լուսաբանելու նպատակով տարբեր դրամաշնորհներով հասարակական կազմակերպությունների հետ համագործակցությամբ ստեղծվել է և զարգացվել է գրասենյակի՝ Պալատից առանձին ինտերնետային կայքը:

Կայքում առկա է ամբողջ անհրաժեշտ տեղեկատվությունն անվճար իրավաբանական օգնության իրավունքի, գրասենյակի գործունեության մասին: Կայքում առկա են նաև անհրաժեշտ տեղեկությունները առանձին խումբ անձանց իրավունքների, տարբեր ոլորտների վերաբերող իրավունքները պարզաբանող ուղեցույցների տեսքով:

Կայքում պարբերաբար հրապարակվում են նաև Հանրային պաշտպանների կողմից վարված հաջող ընթացք և արդյունք գրանցած գործերը: Ներկայացվում են նաև տեղեկություններ ռազմավարական դատավարությունների վերաբերյալ: Հնարավոր բոլոր առիթներն օգտագործվում են հանրային պաշտպանների մասնակցությունը տարբեր հանրային հարթակներում, այդ թվում՝ լրատվամիջոցներում, ապահովելու ուղղությամբ:

2. Հանրային պաշտպանի մարզային գրասենյակի արդյունավետության բարձրացմանն ուղղված աշխատանքների մասին.

Անվճար իրավաբանական օգնությունն առավել համընդգրկուն և հասանելի դարձնելու նպատակը հանրային պաշտպանի գրասենյակի գործունեության առանցքային ուղենիշներից է: Ներկայում գրասենյակը ներկայացված է և նստավայրեր ունի հանրապետության գրեթե բոլոր քաղաքային բնակավայրերում: Բոլոր մարզերում ծառայություններ են մատուցվում թե՛ քրեաիրավական, թե՛ քաղաքացիաիրավական մասնագիտացմամբ:

Առկա ռեսուրսներով մարզերում անվճար իրավաբանական օգնության տրամադրման արդյունավետությունը և ռեսուրսների առավել օպտիմալ օգտագործումն ապահովելու նպատակով՝ յուրաքանչյուր տարվա վերջում կատարվում է հաշվետու տարվա ընթացքում վարված գործերի վիճակագրության ուսումնասիրություն, որի արդյունքում յուրաքանչյուր տարի կատարվում է հանրային պաշտպանների հաստիքները վերաբաշխում: Վերաբաշխումը կատարվում է վարչատարածքային

սկզբունքով՝ ըստ մարզերի, ինչպես նաև ըստ մասնագիտացման (քրեաիրավական, քաղաքացիաիրավական): Հաշվի են առնվում նաև դատարանների նստավայրերի տեղակայումը, շահերի բախման առաջացման վտանգը:

Թեև գրասենյակը ներկայացված է գրեթե բոլոր մարզային քաղաքներում, սակայն սեփական պայմանների բացակայությամբ պայմանավորված՝ մարզային նստավայրերի գրասենյակները հիմնականում վարձակալվում են, ինչը լրացուցիչ ֆինանսական բեռ է ստեղծում գրասենյակի համար: Մարզային նստավայրերի վարձակալության բեռը թեթևացնելու նպատակով՝ Արարատի և Կոտայքի մարզերում մարզպետարանների հետ համագործակցության արդյունքում մարզպետարանի վարչական շենքերում տրամադրվել են աշխատասենյակներ:

Մարզերում անվճար իրավաբանական օգնության հասանելիությունը և արդյունավետություն բարձրացնելու նպատակով՝ մարզերը սպասարկող հանրային պաշտպանների հետ կնքվել են նրանց պատկանող ավտոմեքենաները գրասենյակի կարիքների համար անհատույց օգտագործելու մասին պայմանագրեր: Գրասենյակի կարիքների համար օգտագործելով հանրային պաշտպաններին մասնավոր հիմունքներով պատկանող ավտոմեքենաները՝ գրասենյակը փաստացի միայն փոխհատուցում է վառելիքի ծախսերը, որոնց հատուցման համար յուրաքանչյուր առանձին դեպքում հանրային պաշտպանները ներկայացվում են համապատասխան փաստաթղթային հիմնավորումներ, որոնք անցնում են ստուգման ընթացակարգի մի քանի օղակներով:

Մարզերում իրավաբանական օգնության պատշաճ որակն ապահովելու նպատակով՝ մարզերը սպասարկող հանրային պաշտպանները պարտադիր մասնակցում են փաստաբանների պալատի կողմից իրականացվող վերապատրաստման դասընթացներին, ինչպես նաև մասնակից են դարձվում հանրային պաշտպանների մասնագիտական հմտությունները զարգացնելու նպատակով՝ տարբեր հասարակական և միջազգային կազմակերպությունների հետ համագործակցությամբ հանրային պաշտպանների համար կազմակերպվող առանձին խումբ անձանց իրավունքների պաշտպանության վերաբերյալ դասընթացներին, անձնական կարողությունների զարգացման ծրագրերին և մասնագիտական քննարկումներին:

Մատուցվող ծառայության որակի վերահսկողության նպատակով՝ ինչպես հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարը և տեղակալները, այնպես էլ գրասենյակի մշտադիտարկման խումբը պարբերաբար այցեր է կազմակերպում մարզեր:

Մարզերում հանրային պաշտպաններին օժանդակում են նաև փաստաբանների կողմից ընտրված մարզային համակարգողները: